<<Հայոց եկեղեցու պատմություն>>

9-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայոց ո՞ր կաթողիկոսի օրոք է հրատարակվել հայ առաջին պարբերականը.

(0.5 միավոր)

1) Սիմեոն Ա Երևանցի
2) Եփրեմ Ա Ձորագեղցի
3) Դանիել Ա Սուրմառեցի
4) Ղուկաս Ա Կարնեցի

2. Ե՞րբ է առաջին անգամ հայերեն տպագրվել Աստվածաշունչ մատյանը.

(0.5 միավոր)

1) 1512 – 1513 թթ.
2) 1563 – 1564 թթ.
3) 1638 – 1639 թթ.
4) 1666 – 1668 թթ.

3. Ի՞նչ է կոչվում բոլոր մեծ տոներին նախորդող կիրակին. *(0.5 միավոր)*

1) Նավակատիք
2) Ճրագալույց
3) Տաղավար
4) Բարեկենդան

4. Որտե՞ղ ամփոփեցին Ս. Ներսես Մեծի աճյունը. *(0.5 միավոր)*

1) Թորդան
2) Աշտիշատ
3) Թիլ
4) Վաղարշապատ

5. Ո՞ր լեռան գագաթին Աստված Մովսեսին հայտնեց տասը պատվիրանները. *(0.5 միավոր)*

1) Արարատ
2) Թաբոր
3) Սինա
4) Ձիթենյաց

6. Ո՞ր ժողովն է դատապարտել Մակեդոնի ուսմունքը. *(0.5 միավոր)*

1) Քաղկեդոնի
2) Կոստանդնուպոլսի
3) Նիկիայի
4) Եփեսոսի

7. Ե՞րբ է հայոց կաթողիկոսական աթոռը փոխադրվել Հռոմկլա. *(0.5 միավոր)*

1) 1441 թ.
2) 1105 թ.
3) 1149 թ.
4) 1292 թ.

8. Հայոց ո՞ր կաթողիկոսի տապանաքարի վրա է փորագրված «Պաշտպան հայրենեաց» մակագրությունը. *(0.5 միավոր)*

1) Ներսես Ե Աշտարակեցի
2) Գևորգ Ե Սուրենյանց
3) Վազգեն Ա Պալճյան
4) Մկրտիչ Ա Խրիմյան

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը ---------- թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը. Հռոմկլայի ժողովը մեկ անգամ ևս մերժում է Քրիստոսի երկու բնության վարդապետությունը: *(1 միավոր)*

10.1889 թ. Կ.Պոլսի հայոց պատրիարք Խորեն Աշըգյանի և արքեպիսկոպոս ---------- ջանքերով հիմնվում է Արմաշի դպրեվանքը, որտեղ բարձր հիմքերի վրա էր դրված հայագիտական առարկաների դասավանդումը: *(1 միավոր)*

11. Հայոց կաթողիկոս Հովհաննես Գ Օձնեցու նախաձեռնությամբ 719 թ. ---------- քաղաքում եկեղեցական ժողով է գումարվում, որտեղ հատուկ կանոն է ընդունվում պավլիկյանների դեմ: *(1 միավոր)*

12. Մկրտությունն ու դրոշմը ամեն մեկիս համար մեկ անգամ է լինում, իսկ ---------- ը կարող է կրկնվել: Այսինքն, եթե մարդը նորից մեղք է գործում, ապա նրան հնարավորություն է տրված մաքրվել մեղքից և վերադառնալ ճիշտ ճանապարհի: *(1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բացատրություններին.

(1 միավոր)

1. Եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է հաղորդության խորհուրդը:

2. Եկեղեցական արարողությունների ժամանակ հանդիսավորությամբ կատարվող հոգևոր երգ:

3. Եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջությունը:

4. Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն:

ա) ծես

բ) ժամերգություն

գ) նշխար

դ) պատարագ

ե) շարական

1	
2	
3	
4	

14. Հայոց եկեղեցու տոները համապատասխանեցնել նրանց տոնման ժամանակահատվածին. *(1 միավոր)*

1. հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում

2. Զատիկից մոտ երկու ամիս անց

3. սեպտեմբերի 28-ի մերձակա կիրակի օրը

4. սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը

ա) Վարագա խաչի

բ) Խաչվերաց

գ) Թարգմանչաց

դ) Մարիամ Աստվածածնի վերափոխման

ե) Կաթողիկե Սուրբ Էջմիածնի

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալման ժամանակագրական հաջորդականության. *(1 միավոր)*

ա) Ներսես Բ Բագրևանդացի
բ) Հովհաննես Ա Մանդակունի
գ) Մովսես Բ Եղիվարդեցի
դ) Գյուտ Ա Արահեզացի
ե) Բաբկեն Ա Ոթմսեցի

1	
2	
3	
4	
5	

16. Նշված եկեղեցիները դասավորել ըստ կառուցման ժամանակագրական հաջորդականության. *(1 միավոր)*

ա) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի
բ) Կարսի Կաթողիկե եկեղեցի
գ) Անիի Մայր տաճար (Կաթողիկե)
դ) Վաղարշապատի Ս. Հռիփսիմե եկեղեցի
ե) Սևանի կղզու Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիներ

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին. *(2 միավոր)*

« ...Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հռետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին

քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: ...Հրաժարվելով աշխարհիկ կյանքից՝ նա [մտածեց] հավիտենական կյանքի մասին. լուսավորեց Հայաստանը բազում և տարբեր մեկնություններով, բոլոր լեզուներից թարգմանություններ կատարեց և Աստծո եկեղեցին լցրեց աստվածային սուրբ գրքերով: Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

1. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը:

---

2. Ո՞ւմ մասին է այդպես արտահայտվել պատմիչը:

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 2 ճիշտ պատասխանով

18. Նշված իրադարձություններից ո՞ր երկուսն են հաջորդել են 1903 թ. հունիսի 12-ին ցարի հաստատած հայկական եկեղեցապատկան հողերի և գույքի բռնագրավման մասին օրենքի հրապարակմանը. *(0.5 X 2 = 1 միավոր)*

1) Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանն արգելեց օրենքի հրապարակումը հայկական մամուլում:

2) Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը, զոհերից խուսափելու նպատակով, հրահանգեց չդիմադրել ցարական զինվորներին:

3) Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը նամակով իր դժգոհությունը հայտնեց Նիկոլայ II ցարին:

4) Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը նամակով իր դժգոհությունը հայտնեց Ալեքսանդր III ցարին:

5) Կ.Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանը դիմեց սուլթանին՝ խնդրելով ճնշումներ գործադրել ցարական կառավարության վրա:

19. Նշված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(0.5 X 2 = 1 միավոր)*

1) Շահապիվանի ժողովը խիստ պատիժներ սահմանեց պավլիկյանների դեմ, որոնք մերժում էին եկեղեցին և խորհուրդները:

2) Շահապիվանի ժողովը խիստ պատիժներ սահմանեց մծղնեականների դեմ, որոնք մերժում էին եկեղեցին և խորհուրդները:

3) Շահապիվանի ժողովի մասնակիցները քննարկում են նեստորականության խնդիրը, դատապարտում ոչ միայն նեստորականներին, այլև քաղկեդոնականներին:

4) Շահապիվանի ժողովում ընդունվեց 20 կանոն՝ եկեղեցու բարեկարգության, աղանդավորության, ամուսնությունների ու ամուսնալուծությունների, աշխարհիկ ու հոգևոր պաշտոնների և այլ հարցերի վերաբերյալ:

5) Շահապիվանի ժողովում ընդունված պատասխան նամակում քննադատվում էր զրադաշտականությունը՝ որպես մտացածին և հակասականություններից բաղկացած մի կրոն:

№ 20

Խնդիր – առաջադրանք *(2 միավոր)*

20. Վրացիները քրիստոնեություն էին ընդունել դեռևս Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսության տարիներին: IV դարից ի վեր վրաց եկեղեցին դավանաբանական ու ծիսական հարցերում ենթակա էր հայոց եկեղեցուն: Վրաց կաթողիկոսները ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսի կողմից: 591 թ. պարսկա-բյուզանդական պատերազմից հետո Հայաստանի արևմտյան հատվածի հետ Վրաստանի մեծ մասն ընկավ Բյուզանդական կայսրության գերիշխանության տակ: Մորիկ կայսրը փորձում էր հայոց և վրաց եկեղեցիները ենթարկել բյուզանդական եկեղեցուն: Այդ նպատակով Մորիկ կայսրը գումարեց մի քանի ժողովներ: Հայոց եկեղեցին, Մովսես կաթողիկոսի գլխավորությամբ, մերժեց ընդունել քաղկեդոնականությունը, մինչդեռ վրաց եկեղեցին, Կյուրիոն կաթողիկոսի գլխավորությամբ, ընդունեց քաղկեդոնականությունը: 608 թ. Աբրահամ կաթողիկոսը հատուկ շրջաբերականով վրաց եկեղեցին անջատեց հայոց եկեղեցուց: Այդպիսով, վրաց եկեղեցին բաժանվեց Արևելյան ուղղափառ եկեղեցիների ընտանիքից և միացավ բյուզանդական եկեղեցուն:

Հարց:

Ինչո՞ւ վրաց եկեղեցին որոշեց ընդունել քաղկեդոնականությունը և անջատվել Հայոց եկեղեցուց: Մեկնաբանե՛ք վրաց եկեղեցու անջատման պատճառները:

№ 21

Շարադրանք *(2 միավոր)*

21. Ո՞րն է ձեր ամենասիրելի եկեղեցին կամ վանական համալիրը: Ի՞նչ գիտեք նրա մասին: Ներկայացրե՛ք այդ պատմաճարտարապետական կոթողի արտաքին և ներքին կառուցվածքը: